

- արգելուին : Եւ զայս ամէնն շինած էր վասն  
 ծիծաղելոյ եւ մասխարայի . զի եւ տեսողքն  
 80 ուրախութեամբ զուարճասցին . զի սոքօք  
 իմաստունք մխիթարին եւ արմարքն խարին :
- Եւ այլ ներս զնացեալ՝ տեսաք մարդա-  
 կերպ զազանս եւ ծովային կանայս եւ վիշապս  
 ահարկուս . եւ մեծ հաւուզ մի՝ բոլորն պատ  
 85 քաշած . եւ երբ երթաս եւ յերենաս ի քա-  
 րինսն , քարինքն զատին եւ դու ի ջուրն ան-  
 կանխս եւ լաւ թոջիս : Ապա տարան զմեզ ի  
 Փափին սեղանատեղն . եւ էր որպէս կամար  
 կամ խորան բոլորակ , ունէր պատ եւ դուռն ,  
 90 եւ ի վերայ շինած էր ազգի ազգի շինուածս  
 եւ զարմանալի բանս . եւ էր երկու փեղկէ .  
 մին փեղկն սուրբ Պետրոս եւ զարմանալի  
 զէսնի՛Ֆ արած էր . եւ զաղուես ջրոց պուռ-  
 մայով կալած . եւ երբ թողուին զջուրն շար-  
 95 ժէր սուրբն Պետրոս եւ հարկանէր բանալիքն  
 ի փեղկն . եւ սուրբն Պօղոս բանայր եւ ջուրն  
 վազէր ի վերայ մարդաշափ մի եւ սրակէր  
 զմարդիկ . եւ տեղն որ Փափն բազմէր՝ էր բո-  
 լորակ խորանայարկ եւ նկարած գեղեցիկ եւ  
 100 զանազան զեզովք , ոսկով եւ աղնիւ լազվար-  
 դով . կային աթոռք , սքէմլիք եւ սեղանք տրա-  
 պիլպաց ըստ իւրեանց սահմանաց : Եւ ասին  
 մեզ թէ յորժամ Փափն կերակուր ուտէ , եր-  
 գէհոնք առանց մարդոյ հնչեն . եւ ազգի ազգի  
 105 երգս յօրինեն եւ նուագս . եւ մեք աղաչեցաք